https://doi.org/10.46991/S&L/2021.91.035

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԵՐԱՇԽԻՔ

Սոսե Բարսեղյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոն դասախոս,
Էկոնոմիկայի նախարարության խորհրդական

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները նրան տալիս են անհատական հետաքրքրություններն իրականացնելու ընտրության հնարավորություն՝ միաժամանակ նախանշելով դրա սահմանները: Ոչ մի հասարակությունում հնարավոր չէ մարդուն ապահովել բացարձակ ազատություն, քանի որ դա առնվազն հոգեբանական տեսանկյունից կբերի եսասիրական վարքագծի դրսևորման և անարխիայի, իսկ արդյունքում՝ լրջագույն ընդհարումների և տարաբնույթ շահերի բախման: Ահա թե ինչու իրավունքների և ազատությունների համակարգը կազմվում է այնպես, որ երաշխավորի մարդկանց օրինական շահերը և կանխարգելի իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումները առանձին անձանց կողմից իրենց իրավունքների հնարավոր չարաշահումներից[1]:

Իրավական դրույթների մեկնաբանություններն առանձին դեպքերում կարող են և չենթարկվել առողջ բանականությանը, ուստի ավանդաբար ձևավորված «ոսկե կանոնը» պահանջում է, որ կարգավորումները սոսկ տառացի չհասկացվեն՝ խուսափելու համար ակնհայտ անհեթեթությունից[2]: Համանման մոտեցումը անհրաժեշտ է նաև իրավունքների իրացման համատեքստում իրավունքը սահմանող դրույթը մեկնաբանելիս: Սուբյեկտիվ իրավունքների իրացումը նշանակում է միաժամանակ ենթարկվել մեկնաբանության համալիր կանոններին, որպեսզի չխաթարվի իրավունքի էությունը:

Սահմանադրությամբ, միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված իրավունքների իրացման և պաշտպանության մեխանիզմների զարգացմանը համահունչ անհրաժեշտ է հաշվի առնել ու կանխատեսել նաև այն հնարավոր բացասական կամ ոչ ցանկալի արդյունքները, որոնք կարող են առաջանալ իրավունքի պաշտպանության հարցերը քննարկելիս: Ուստի, սուբյեկտիվ իրավունքների իրացումը չի կարող ամբողջապես երաշխավորված լինել, եթե իրավական դոկտրինայում լիարժեքորեն հետազոտման առարկա չդառնա այնպիսի ինստիտուտը, ինչպիսին իրավունքի չարաշահումն է:

Իրավունքի չարաշահման արգելքի ինստիտուտը թեև հայտնի է դեռ վաղ ժամանակներից, այնուամենայնիվ իրավակիրառ պրակտիկայում իրավունքի չարաշահման կանխարգելման և համապատասխան իրավադրույթների կիրառումը լայն

[1] Տե՛ս **Малиновский А.А.** Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование) – М.: Юрлитинформ, 2007. – 428 с- էջ 210: Հասանելի է՝ https://mgimo.ru/upload/iblock/665/665e8d6a6c2e9b3e3c54478d82088889.pdf (Մուտք՝ 16.05.2020):

[2] Տե՛ս **prof. Jeffrey Goldsworthy,** Clarifying, Creating, and Changing Meaning in Constitutional Interpretation: A Comment on András Jakab, “Constitutional Reasoning in Constitutional Courts—A European Perspective.”, German Law Journal, Published online by Cambridge University Press, 2019, pp. 1279-1295- էջ 7: Հասանելի է՝ https://www.cambridge.org/core/search?q=Clarifying%2C+Creating%2C+and+Changing+Meaning+in+Constitutional+Interpretation%3A+&_csrf=XSdcDUfZ-jsXOzMsN7eCSsJcCfkAS7zExSEs (Մուտք՝ 17.05.2020):

տարածում չունի, հետևապես դրանք դեռևս իրենց համապատասխան գնահատականն ու կիրառումը չեն ստացել հայրենական իրավական համակարգում:

Խնդրո առարկա հարցի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ իրավունքի չարաշահման արգելքն անհրաժեշտ է դիտարկել Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների համատեքստում, ինչպես նաև վերահիմաստավորել այս ինստիտուտի էությունը սահմանադրական նորմերի անմիջական կիրառության գաղափարի լույսի ներքո: Հաշվի առնելով, որ իրավունքի չարաշահման դեպքերից ամբողջությամբ խուսանավելը օբյեկտիվորեն հնարավոր չէ, խիստ անհրաժեշտ է իրավական դոկտրինայում ունենալ այն ուղենիշները, որոնք կանխորոշիչ կլինեն իրավակիրառ պրակտիկայի համար:

1995թ. հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրությունը նախանշում էր իրավունքի չարաշահման արգելքը: Վերջինիս 48-րդ հոդվածն ամրագրում էր. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը: Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով»:

Այդպիսի կարգավորում արտացոլվեց նաև 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության փոփոխությունների 47-րդ հոդվածով:

Արդեն Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների 77-րդ հոդվածն ամրագրում է. «Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով»: Իհարկե, իրավունքի չարաշահումն իր բովանդակությամբ ավելի լայն է, քան ուղղակի Սահմանադրության 77-րդ հոդվածով նախատեսված վարքագծի կանոնը: Կարծում ենք, իրավունքի չարաշահման բացահայտման հիմնական ուղենիշը Սահմանադրության 39-րդ հոդվածն է. «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին»:

Իրավունքների չարաշահման արգելքը նախատեսված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածով. «Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով»: Համանման կարգավորումներ առկա են նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (30-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում (5-րդ հոդված):

Ստորև անդրադառնանք մի քանի հղումների, որոնք թերևս կվերահաստատեն մեր հիշյալ դիրքորոշումը.

Հոդված 17-րդը ներառված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում, քանի որ չի կարող բացառվել, որ անձը կամ անձանց խումբը, հիմնվելով Կոնվենցիայով սահմանված իրավունքների վրա, փորձեն ձեռք բերել իրավունք՝ իրականացնելու գործողություններ՝ նպատակ ունենալով ոչնչացնելու այդպիսի նույնանման իրավունքները[1]:

[1] Տե՛ս Council of Europe/European Court of Human Rights, Guide on Article 17 of the European Convention on Human Rights -Prohibition of abuse of rights, 2019, էջ 6: Հասանելի է՝ https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_17_ENG.pdf (Մուտք՝ 15.05.2020):

«Կոնվենցիոն համակարգում գոյություն ունի ժողովրդավարական հասարակության և անհատական իրավունքների պաշտպանության պահանջների միջև որոշակի փոխզիջում: Ժողովրդավարական համակարգի կայունությունը և արդյունավետությունը երաշխավորելու համար պետություններից կարող են պահանջվել ինքն իրեն պաշտպանելու հատուկ միջոցառումներ ձեռնարկել՝ միաժամանակ հետևողականորեն գնահատելով դրանց շրջանակը և հետևանքները» [1]:

Կոնվենցիայի 17-րդ հոդվածով սահմանված իրավունքի չարաշահման արգելքի նպատակն է պայքարի միջոցներով պաշտպանել ժողովրդավարական հասարակությունը այնպիսի գործողություններից կամ գործունեությունից, որոնք ոչնչացնում կամ անհամաչափ սահմանափակում են հիմնարար իրավունքները և ազատությունները՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք իրականացվում են պետության, անձանց խմբի կամ անձի կողմից[2]: Կոնվենցիան սահմանում է իրավունքի չարաշահման առկայության հավաստման բարձր շեմ՝ իրավունքի չարաշահում համարելով այնպիսի գործողությունները, որոնց նպատակն են ատելությունը, այլատյացությունը, ահաբեկչությունը և պատերազմական հանցագործությունը, բռնատիրական գաղափարախոսությունը և ժողովրդավարությանը չհամապատասխանող այլ քաղաքական գաղափարները և այլն[3]:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան սահմանում է նաև գանգատի իրավունքի չարաշահման իրավական հիմքերը: Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 35-ի 3(ա) կետի իմաստով «չարաշահում» հասկացությունը պետք է ընկալվի իր սովորական նշանակությամբ՝ ընդհանուր իրավական տեսության համաձայն, մասնավորապես որպես իրավունքի, իր ստեղծման նպատակներից տաբերվող՝ այլ նպատակների վնասակար իրականացում[4]:

Պետությունների համար ևս առկա են թույլատրելի վարքագծի արտաքին սահմաններ, որոնցից այն կողմ արդեն սկսվում է ոչ թե միջազգային իրավունքով պահպանվող շահերի պաշտպանության նպատակով իրավունքներից օգտվելը, այլ իրավունքի չարաշահումը[5]:

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով իրավունքի չարաշահման դրսևորում կարելի է որակել ամերիկյան քաղաքական ոլորտում հանրահայտ «*filibuster*»-ը, որի նպատակն է արհեստական միջոցներով (երկարատև զեկույցի ներկայացմամբ) հետաձգել օրենսդիր մարմնում նախագծի ընդունումը:

Լ. Ա. Տերեխովան նշում է, որ. «(...) եթե առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ, ապա կողմերից մեկը դատարանի վճռով ոչ իրավաչափ կերպով ինչ-որ օգուտ է ստացել և գիտի այդ մասին: Եվ եթե այդ անձը նման պայ-

---

[1] Տե՛ս Council of Europe/European Court of Human Rights, Guide on Article 17 of the European Convention on Human Rights -Prohibition of abuse of rights, 2019, էջ 6: Հասանելի է՝ https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_17_ENG.pdf (Մուտք՝ 15.05.2020)

[2] Տե՛ս Council of Europe/European Court of Human Rights, Guide on Article 17 of the European Convention on Human Rights -Prohibition of abuse of rights, 2019, էջ 7: Հասանելի է՝ https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_17_ENG.pdf (Մուտք՝ 15.05.2020)

[3] Տե՛ս Council of Europe/European Court of Human Rights, Guide on Article 17 of the European Convention on Human Rights -Prohibition of abuse of rights, 2019, էջ 10: Հասանելի է՝ https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_17_ENG.pdf (Մուտք՝ 15.05.2020)

[4] Տե՛ս Եվրոպայի Խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ընդունելության չափանիշների վերաբերյալ գործնական ուղեցույց, 2014 թվական, էջ 49: Հասանելի է՝ https://www.echr.coe.int/Documents/Admissibility_guide_HYE.pdf (Մուտք՝ 15.05.2020)

[5] Տես **Каламкарян Р.А., Мигачев Ю.И.,** Международное право: Учебник. — М.: Изд-во Эксмо, 2004. — 688 с.-էջ 76: Հասանելի է՝ http://www.pseudology.org/MID/Kalamkaryan_Migachev_Mezhdunarodnoe_Pravo2.pdf (Մուտք՝ 17.05.2020)

մաններում բողոքարկում է վճիռը, ապա դա ոչ այլ ինչ է, *քան իրավունքի չարաշահում*»[1]:

Իրավունքի չարաշահման կանոնակարգումներ կան նաև ներպետական օրենսդրական ակտերում, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, որի 12-րդ հոդվածն ամրագրում է. «1. Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում: (...)»: Ընդ որում, իրավունքի չարաշահման դեպքում դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը կարող է մերժել անձին նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում:

Խնդրի համալիր լուծման տեսանկյունից որոշակի տարբերություն պետք է դրվի իրավունքի չարաշահման և սահմանազանցման միջև: Սահմանազանցումը օրենսդրական ամրագրում ստացած հակահիրավական արարք է, մինչդեռ՝ չարաշահման դեպքում այն հակահիրավական չի որակվում, հետևաբար պատասխանատվության հարց ևս չի ծագում: Այնուամենայնիվ, այս դեպքում անձը զրկվում է իր իրավունքի դատական պաշտպանությունից: Տվյալ դեպքում թեև օրենքի շրջանակում ձևական առումով թույլատրելի է իրավունքից բխող որոշակի գործողություն կատարելը, սակայն դա իրավաչափ նպատակ չի հետապնդում և չի համապատասխանում ժողովրդավարության սկզբունքներին:

Հաշվի առնելով իրավունքի չարաշահման բնութագրական այն հատկանիշը, որ վերջինս որպես այդպիսին չի որակվում հակահիրավական արարք, որի համար պատասխանատվություն է սահմանվում՝ կարծում ենք՝ Սահմանադրությունը, սահմանադրական նորմերի անմիջական կիրառության ուժով, կարող է լինել իրավունքի չարաշահման հակազդման միջոց:

Միաժամանակ, անդրադառնալով իրավունքի չարաշահման արգելքի կիրառման դժվարություններին՝ հարկ է նշել. «Իրավունքի չարաշահման արգելման իրավակարգավորման և իրավակիրառման բարդությունը պայմանավորող հանգամանքներից է թերևս այն, որ իրավունքի չարաշահումը հստակ չափանիշներ բովանդակող իրավական եզրույթ չէ և իր աղերսներն ունի բարոյական նորմերի հետ: Իրավունքի չարաշահման կանխումը բնութագրվում է որպես համընդհանուր սկզբունք»[2]: Այնուամենայնիվ, ինչպես յուրաքանչյուր համընդհանուր սկզբունք, ինչպիսին են օրինակ՝ իրավունքի գերակայությունը, օրինականությունը, կամայականության արգելքը, այնպես էլ իրավունքի չարաշահման արգելքի սկզբունքը պետք է մեկնաբանվի և զարգանա իրավակիրառ պրակտիկայում՝ Սահմանադրության էությանը և միջազգային իրավական նորմերին համահունչ: «Ճշմարիտ են այն դատարանների որոշումները, որոնք, հանդիպելով իրավունքի չարաշահման դեպքի կոնկրետ իրավունքի ճյուղի շրջանակներում, որտեղ իրավունքի չարաշահման արգելքն ուղղակի ամրագրում չի ստացել, արարքի որակման ժամանակ հղում են կատարում ՌԴ Սահմանադրությանը»[3]:

---

[1] **Վ.Հ. Գրիգորյան**, Վերաքննիչ դատարանի լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում; ԵՊՀ.- Եր.: Հայրապետ հրատ., 2016.- 208 էջ-էջ 79: Հասանելի է՝ https://dialog.am/storage/files/posts/posts_99630401981__.pdf (Մուտք՝ 15.05.2020):

[2] **Малиновский А.А.** Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование) – М.: Юрлитинформ, 2007. – 428 с- էջ 208: Հասանելի է՝ https://mgimo.ru/upload/iblock/665/665e8d6a6c2e9b3e3c54478d82088889.pdf (Մուտք՝ 16.05.2020):

[3] **Малиновский А.А.** Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование) – М.: Юрлитинформ, 2007. – 428 с- էջ 212: Հասանելի է՝ https://mgimo.ru/upload/iblock/665/665e8d6a6c2e9b3e3c54478d82088889.pdf (Մուտք՝ 16.05.2020):

Իհարկե, իրավունքի չարաշահման արգելքի կիրառման խոչընդոտը պայմանավորված է այն հանգամանքով, որ, ինչպես նշում է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն.Ս. Մալեինան, իրավունքի չարաշահման խնդիրն իր իրավական արտացոլումը չպետք է ունենա քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացման ոլորտում: Սահմանադրական և ճյուղային նորմ-սկզբունքները, որ արտացոլում են այդ գաղափարը, չեն հանդիսանում իրավունքի նորմ, քանզի չեն բովանդակում իրավական հստակ նկարագիր: Դրանցով առաջնորդվելը չի բացառում դատական և այլ իրավակիրառ մարմինների կողմից կամայական հայեցողությունը և դրանով իսկ չի բացառում քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակումը, և նրանց չիմնավորված իրավական պատասխանատվության ենթարկելը: Ավելին չհամատեղվող սահմանադրական սկզբունքներ են հանդիսանում. քաղաքացիներին թույլատրվում է այն, ինչ արգելված չէ օրենքով, և քաղաքացիները կարող են իրականացնել իրենց իրավունքները՝ չվնասելով հասարակական շահը[1]:

Իհարկե, թեև այս մոտեցումը հիմնվում է արդարացի փաստարկների վրա, այնուամենայնիվ, կարծում ենք, իրավունքի չարաշահման արգելքի սկզբունքն այդպիսի մոտեցման դեպքում թերագնահատված է, մինչդեռ ճիշտ իրացման դեպքում սահմանադրական հիմք ունեցող այս ինստիտուտը կարող է ինքն էլ միջոց լինել իրավունքների պաշտպանության համար: Ինչպես նշում է իրավ. գիտ. դոկտոր Վ.Ի. Կրուսը. «Այդպիսի սպառնալիքներին հակազդելու միակ հնարավորությունը սահմանադրական ճշմարտության գոյության կանխավարկածն է, և դրա իրավական ամրագրման համար հատուկ ինստիտուտի ստեղծումը: Դա է սահմանադրական արդարադատության գաղափարի էությունը[2](...)»:

Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 42-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, *ինչն արգելված չէ օրենքով* և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Թեև այս դրույթը նույն տեսքով իր արտացոլումը չգտավ նոր խմբագրությամբ Սահմանադրության մեջ, այնուամենայնիվ Սահմանադրության 39-րդ հոդվածի ուժով այսօր էլ մարդու ազատությունը չի բնութագրվում բացարձակությամբ, քանի որ այլոց իրավունքների և ազատությունների խախտումը կաշկանդում է անհատին՝ պատվար հանդիսանալով իրավունքի չարաշահման համար: Ավելին՝ սահմանադրական կարգավորումը խստացվել է, քանի որ դուրս է մնացել այն դրույթը, ըստ որի՝ անձը կարող է անել այն, ինչ արգելված չէ օրենքով՝ անձին պարտավորեցնելով գործել՝ Սահմանադրությանը և օրենքին չհակասելով: Միաժամանակ, սահմանադրական նորմի անմիջական կիրառության գաղափարի լույսի ներքո իրավունքի չարաշահման ինստիտուտի իրացումն առավել իրական կարող է լինել: Մասնավորապես, Սահմանադրության անմիջական կիրառությունը հիմնականում կապվում է մարդու իրավունքի հետ՝ սահմանելով Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքները որպես անմիջականորեն գործող իրավունքներ: Սահմանադրական նորմերի անմիջական կիրառության ամենաբնորոշ առանձնահատկությունը այն է, որ անձն իրեն վերապահված իրավունքների համար կարող է օգտվել դատական պաշտպանությունից անմիջականորեն՝ հիմնվելով սահմանադրական կարգավորման վրա,

---

[1] Տե՛ս **Малиновский А.А.** Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование) – М.: Юрлитинформ, 2007. – 428 с- էջ 216: Հասանելի է՝ https://mgimo.ru/upload/iblock/665/665e8d6a6c2e9b3e3c54478d82088889.pdf (Մուտք՝ 16.05.2020):

[2] Տե՛ս **В.И.Крусс,** Конституцуя и злоупотребления правом: современный контекст, Научная библиотека ТвГУ, 67-75с.- էջ 69: Հասանելի է՝ http://eprints.tversu.ru/2663/1/%D0%9A%D1%80%D1%83%D1%81%D1%81_1_9%282009%29.pdf (Մուտք՝ 17.05.2020):

իսկ դատարանը չի կարող մերժել այդ պահանջը՝ հիմնավորելով, որ չկա տվյալ նորմը կոնկրետացնող օրենսդրական կամ ենթաօրենսդրական իրավական ակտ[1]:

Հետևապես, խախտված իրավունքների պաշտպանություն հայցելիս անձինք կարող են քննարկել և վկայակոչել նաև իրավունքի չարաշահման սկզբունքը, ինչից չպետք է խուսանավեն դատարանները: Իրավունքի չարաշահումը ևս ցանկալի է և անհարաժեշտ է, որ դառնա դատարանների քննության առարկա իհարկե իրավունքի չարաշահման արգելքի սկզբունքի կիրառությանը բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Միաժամանակ, իրավունքի չարաշահումը ևս կարող է իրավակիրառ մարմնի կողմից կիրառվելիք իրավունքի սահմանափակման առանձին չափորոշիչ հանդիսանալ: Այսինքն, այն կարող է իրացվել Սահմանադրությամբ իրավունքի սահմանափակմանը ներկայացվող պահանջների շրջանակում:

Եթե իրավունքի չարաշահման վերաբերյալ անդրադարձ կատարենք դատական պրակտիկային, ապա կունենանք հետևյալ պատկերը: Սահմանադրական դատարանի 2008 թ. հոկտեմբերի 14-ի ՍԴՈ–766 որոշմամբ հավաստվել է ՄԻԵԴ-ի այն մոտեցումը, որ պետությունը պարտավոր է իրավական երաշխիքներ ստեղծել իրավունքի չարաշահման արգելքի սահմանադրական այդ պահանջն իրականացնելու և երկրի սահմանադրական կարգի կայունությունն ապահովելու ուղղությամբ[2]:

Սահմանադրական դատարանը իր 2018 թ. հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշմամբ արտահայտել է այն դիրքորոշումը, որ անձի՝ իր իրավունքի իրականացման (մասնավորապես վերաքննիչ բողոք բերելու) համար եթե ձևական պահանջների խախտման դեպքում չափազանց խիստ հետևանքներ նախատեսելը կսահմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, ապա բովանդակային պահանջների խախտման հանդեպ *անհամաչափ մեղմ գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ ստեղծել*: **Սահմանադրական դատարանի** 2010 թ. մայիսի 25-ի ՍԴՈ–890 որոշման մեջ արդեն տեսնում ենք, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանման նպատակներից մեկն էլ դատարան դիմելու իրավունքի չարաշահման կանխարգելումն է: Մեկ այլ՝ 2020 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-1515 որոշմամբ այն դիրքորոշումն է ներկայացվել, որ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով հայցի՝ դատարանի կողմից կրկնակի քննության արգելքի նպատակներից է բացառել հայցվորի կողմից դատական պաշտպանության իրավունքի չարաշահումը:

Վճռաբեկ դատարանի 2014 թ. **քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0930/02/13 որոշմամբ սահմանվել է, որ** դատարաններին վերապահված հիմնական պարտավորությանը համաչափ տուժանքի սահմանները որոշելու իրավունքն իրավական այն միջոցներից մեկն է, որոնք ուղղված են անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը կանխելուն, ինչն իր հերթին համահունչ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքի որևէ ձևով չարաշահման արգելքին: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհան-

---

[1] Տե՛ս **Венгеров А. Б.** Теория государства и права. Учебник 3-е изд. – М.: Юриспруденция, 2000. – 528 с.: Հասանելի է՝ http://www.bibliotekar.ru/teoria-gosudarstva-i-prava-4/22.htm (24.04.2020):

[2] Տե՛ս **Գ. Դանիելյան, Ա. Գյուլումյան, Հ. Նազարյան, Վ. Այվազյան և Հ. Ենգոյան, ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի,** ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը (ուղեցույց–ձեռնարկ), հատոր 1, հրատ. «Զանգակ–97» ՍՊԸ տպ., Երևան, 2016, 945 էջ-էջ 35: Հասանելի է՝ http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2016/book-sdv-2016.pdf (Մուտք՝ 16.05.2020):

դերձ իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն, ըստ էության, նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին է:

Այսպիսով, իրավունքի չարաշահման արգելքն գործնականում ավելի հաճախ հանդես է գալիս և իրացվում որպես անձանց որոշակի իրավունքների ամրագրման կամ բացակայության օրենսդրական կարգավորման հիմնավորում, քանի որ այն դեպքում, երբ այդպիսի սահմանափակումը օրենքով դեռևս հստակ ամրագրված չէ, ապա իրավունքը սահմանափակելը ավելի խնդրահարույց կարող է լինել:

Միաժամանակ, իրավունքի չարաշահումը դատական պրակտիկայում, կարծում ենք, ոչ այնքան խորությամբ է բավահայտված: Այս սկզբունքը պետք է գործիք հանդիսանա իրավունքի կրողի կողմից չարամիտ դիտավորությունը կանխելու համար: Միաժամանակ, այն միևնույն դրսևորումը չի կարող ունենալ անձ-անձ և անձ-պետություն հարաբերությունների դեպքում: Սահմանադրության 39-րդ հոդվածի ուժով դատարանները դեռևս պետք է ըստ գործի փաստակազմի կարողանան բացահայտել և մեկնաբանել այն: Մասնավորապես, իրավունքի չարաշահումը ենթադրում է մրցակցող շահերի առկայություն, այլապես որպես այդպիսին չարաշահում չէր կարող որակվել, ուստիև դատարանի խնդիրն է լինելու գնահատել գերակայող շահը: Հատկապես կարող է կարևոր լինել նաև օրենսդրությամբ անձին վերապահված իրավունքի էության բացահայտման և մեկնաբանման ժամանակ, երբ իրավունքի իրացման հնարավորությունը խաթարում է այլոց իրավունքը, տվյալ դեպքում դա ազդակ պետք է հանդիսանա, որ ամրագրված իրավունքի այդ կերպ իրականացման մեկնաբանումը խոցելի է: Միաժամանակ, իրավունքի չարաշահման փաստը կարող է հավաստվել, եթե անձի գործողությունը հակասում է այդ իրավունքի նպատակին և խոչընդոտում իրավասու մարմնի գործունեությունը կամ վարույթի պատշաճ իրականացումը, ինչպես օրինակ՝ ՄԻԵԴ գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահման դեպքում: Կարևոր է շեշտադրել, որ *խոսքը ոչ թե իրավունքի առկայության մասին է, այլ առկա իրավունքի իրացմանն ուղղված անձի կողմից դրսևորվող գործողության և այդ գործողության սահմանափակման*: Այսպիսով, կարող ենք փաստել, որ այսպիսի մոտեցման դեպքում Սահմանադրության իրացման ուժով դատարանները ավելի պատշաճ ուշադրություն պետք է դարձնեն իրավունքի չարաշահման կանխարգելմանը:

Իրավունքի չարաշահման սկզբունքը թեև կարող է անմիջականորեն չնշվել, սակայն այն պետք է հաշվի առնվի ինչպես օրենսդրի, այնպես իրավակիրառողի կողմից: Օրինակ ՄԻԵԴ-ի CASE OF KARAHASANOĞLU v. TURKEY գործով (*Applications nos.* 21392/08) թեև ուղղակի չի մատնանշվել հիշյալ սկզբունքը, սակայն իրավական հետևանքը կիրառելիս գնահատվել և կարևորվել է նաև իրավունքի չարաշահման բացակայությունը: Օրինակ, քննարկելով դատական ծախսերի բաշխման հարցը, երբ գործն ըստ էության չի լուծվում, մասնավորապես արդարացված համարելով դատական ծախսը պատասխանողի վրա դնելը՝ ՄԻԵԴ-ը կարևորել է նաև այն հանգամանքը, որ հայցվորը չի կարող հանդիմանության արժանանալ դիմումատուի՝ պատասխանողի դեմ չարամիտ կամ անլուրջ դատական հայց ներկայացնելու համար:

Հարկ է նշել, որ դեռևս վերջերս՝ 2021 թվականի փետրվարի 12-ի Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1576 որոշումը նոր առաջընթաց քայլ է իրավունքի չարաշահման ինստիտուտի կիրառման սահմանների և հիմքերի տեսանկյունից:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանը նշել է. «Օրենսդիրն ամուսնության անվավերության համար հատուկ կարգավորում նախատեսելիս կեղծ ամուսնություն կնքելը դիտարկել է որպես ամուսնության իրավունքի չարաշահում, քանի որ սուբյեկտիվ իրավունքն ի վնաս այլ անձի և հասարակության օգտագործելը նենգափոխում է ընտանիքի գաղափարը: Իրավունքի տեսության մեջ իրավունքի

չարաշահումն արձանագրվում է, երբ առկա է, որպես կանոն, հետևյալ պայմանների համակցությունը. 1. անձը պետք է ունենա համապատասխան իրավունքը, 2. իրավունքի չարաշահումը տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի իրացման ընթացքում, անձն առերևույթ գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան, 3. անձի՝ առերևույթ իրավաչափ գործողությունները հանգեցնում են պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերի խախտմանը, իսկ անձը ձգտում է հասնել իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին, 4. իրավունքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ անձը գիտակցում է, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, հետևաբար՝ պետք է կանխատեսի, որ կարող է վնաս պատճառել պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերին: Այդ առումով իրավունքի չարաշահման առանձնահատկությունն այն է, երբ իրավունքի սուբյեկտն իր գործունեության ընթացքում գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան, կատարում է օրենքով իր վրա դրված ֆորմալ պարտականությունները, սակայն խեղաթյուրում է իրավունքի նշանակությունը՝ գործելով տվյալ իրավանորմի նպատակային նշանակությանը կամ տվյալ դեպքում՝ ամուսնության իրավունքի նպատակին և ոգուն հակառակ, ինչի արդյունքում վնաս է հասցվում այլ անձին, պետությանը, հասարակությանը»: Այս իրավական դիրքորոշումը հարցադրումների ընդգրկվածությամբ և համալիր բացահայտմամբ կարող է ուղենիշ հանդիսանալ իրավակիրառ պրակտիկայի կանխատեսելի ու արդյունավետ զարգացման համար:

Ամփոփելով նշենք, որ իրավունքի չարաշահման ինստիտուտի արդյունավետ կիրառումը կարող է նպաստել անձանց իրավունքների պաշտպանությանը, և հատկապես այն դեպքերում, երբ իրավունքի պաշտպանության օրենսդրական մեխանիզմները թույլ են՝ դառնալով իրավունքների պաշտպանության այլընտրանքային եղանակ: Իրավունքի չարաշահման արգելքի սահմանադրական հիմքերն այն իրավական բազան են, որոնք թույլ են տալիս հակազդել իրավունքի չարաշահմանը և իրավունքի զարգացմանը համահունչ իրավունքի չարաշահման սկզբունքը դիտարկել նորովի՝ վերը քննարկված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Քննարկվող ինստիտուտը կարևոր գործիք կարող է լինել իրավունքի կրողի կողմից չարամիտ դիտավորությունը կանխելու, մրցակցող իրավունքների դեպքում իրավունքի պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու, Սահմանադրությամբ իրավունքի սահմանափակմանը ներկայացվող պահանջների շրջանակում ի թիվս այլոց սահմանափակման չափորոշիչ հանդիսանալու և այլնի համար:

НЕПОСРЕДСТВЕННОЕ ПРИМЕНЕНИЕ КОНСТИТУЦИОННОЙ НОРМЫ КАК ГАРАНТИЯ ЗАПРЕТА НА ЗЛОУПОТРЕБЛЕНИЕ ПРАВОМ

Сосэ Барсегян

Преподаватель кафедры Конституционного права ЕГУ,
Советник министерство экономики РА

Актуальность статьи обусловлена развитием института злоупотребления правом и необходимостью выбора эффективных средств защиты права.

В статье представлен институт злоупотребления правом: в случае правильной реализации этот институт, имеющий конституционную основу, может сам стать инструментом для защиты прав, и особенно в тех случаях, когда слабы законодательные механизмы защиты права.

DIRECT APPLICATION OF THE CONSTITUTIONAL NORM AS A GUARANTEE OF THE PROHIBITION OF ABUSE OF RIGHT

Sose Barseghyan
Lecturer at the YSU Chair of Constitutional Law
Advisor the Ministry of Economy

The relevance of the article is the development of the institution of abuse of right and the need to choose effective means for protecting rights.

The article presents the institution of abuse of right, in the case of the proper implementation of which the institution having a constitutional basis can itself become a tool for the protection of rights, and especially in cases where the legislative mechanisms for the protection of rights are weak.

Բանալի բառեր - իրավունքի չարաշահում, իրավունքի սահմանազանցում, իրավունքի նպատակ:
Ключевые слова: злоупотребление правом, нарушение права, цель права.
Key words: abuse of the right, violation of the right, the purpose of the right.